

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE

Գրաստանը ԵՂԻՔԻ ՓՈՐՈՍԵԱՆ

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ ժամացումները կ'ընդունուին մասնաւոր հաշիւով :



ԱԶԳԱՅԻՆ, ԳՈՍԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ր Ե Ր Թ

ՊԱՅՄԱՆՔ

ՆՊԻՊՏՈՍ

Տարեկան դրոշմը 30

ԱՐՄԱՍՆԱՆ

Տարեկան գրանց 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍԵՆԵՐՈՒ փոխարէն վճարուած գրքի պիտի ըլլան :

Թիւ՝ ԱՐՇԱՂՈՍԻ եւ թիւ՝ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթակա խնդրոց համար պէտք է դիմել նիւթագրութեան հասցեով թերթի Մասնակարարին, որ է՝

ՎԵՐՏԻՔ ՓՈՐՈՍԵԱՆ

ԿԸ ՇՐՄԱՐԱՎՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանատու են իրենց գրածներուն

ՀԱՏԸ 20 ՓՈՒՍ ՈՂՁ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻԻՆ

- 1. - Կարեւորիւն. 2. Կարեւորիւն գործեր. 3. - Նպաստ. 4. - Արդիւնք. 5. - Ա. Բ. Տեղեկագիրներ. 6. - Հախաւորութիւն. 7. - Ընկերութեան անցեալը. 8. - Ներկայ. 9. - Ապագան. 10. - Հ. Բ. Ը. Միութիւնը ընդհանուր գծերով. 11. - Կանոնագիր :

(Հիմնադիր, Բարերար և Պատույն Անդամ)

Եզրագրողը արդէն շատ մօտէն ծանօթ են Հ. Բ. Ը. Միութեան վիճակին : Եթէ հիմայ սոյն քանի մը իրերայալորդ գրութիւնները ՄԻՈՒԹԻՆ կը նուիրուի, ո՛չ թէ Եզրագրողն ծանօթացնելու համար է, զայն այլ Թուրքիոյ զանազան գաւառներէն «Արշալոյս» ի նմանագրութեան եղած հարցումներուն միանուազ գոհացում մը տալու զիտարութիւնը ունիմ : Բնականաբար ամեն մէկ եղած հարցումի առանձին նամակներով պատասխանելը ընդարձակ ժամանակամիջոցի կը կարծուի և գիւրդի գործ մը չէ, մասնաւոր երբ խնդիրը Հ. Բ. Ը. Միութեան նման ճիւղաւորեալ Ընկերութեան մը կը վերաբերի :

Երկու տարուան տեղեկագիրները աչքի առջև ունենայով, դիւրին է համոզուելը թէ՛ Հ. Բ. Ը. Միութիւնը ընդարձակ գործունէութիւն և սքանչելի արդիւնք տուած է : միւս կողմանէ՛ եթէ գործերը այսպէս շարունակուին - և ի՞նչ բան կըրնայ արգելը հանդիսանալ չ'շարունակուելու - ամենամեծ ալ ապագայ կը խոստանայ :

Կարգ մը « յօգ պիլիք » պարուններ, որոնք ո՛ր է և արժանիքէ զուրկ, բայց մեծ մեծ ջարդելու սովորութիւնը միայն ունին, աչքն ձուլեն թելադրանքներ սպրդեցնելու կը ջանան, սակայն ատենք ՄԻՈՒԹԻՆ հաստատուն քայլերուն առջև ո՛ր է արժէքէ զուրկ մնալու գատապարտուած են, որովհետեւ ընկերութեան վարիչները հայութեան ամենակարեւոր և անհրաժեշտ պէտքերուն ծառայեցնելու նպատակաւ կողմած են զայն, և ո՛չ թէ այս ու այն « յօգ պիլիք » ինքնահաճոյքին գոհացում տալու համար :

Հոս տեղն է որ Ընկերութեան

Վարչային կազմը ներկայացնեմ «Արշալոյս» ի ընթերցողներուն : Ատենք են Հիմնադիրները, և միանգամայն կեդրոնական Վարչային ժողովոյ անդամները : Վսեմ. Պօղոս բաշա Նուպար (Ատենապետ) Վսեմ. Եագուպ Արթին բաշա (Իերատենապետ) Ազն. Տիարք՝ Երուսաղ Ազարթն պէյ (Իերատենապետ) Ա.ա.քել Պէյ Նուպար (Իանձապետ) Տր. Ն. Տաղաւարեան (Ատենապետ) Մկրտիչ Անդրանիկեան, Կարապետ պէյ Շէրտեմեան, Գրեգոր Եղիտեան և Մկրտիչ պէյ Մարկոսի (Անդամք) :

Ընկերութիւնը իր կանոնագրի Հինգերորդ յօդուածով ԲԱՐԵՐԱՐ և ՊԱՏԻՈՅ ԱՆՊԱՄՆԵՐՈՒ համար սահման գծած է հետեւեալ կերպով :

Յօդուած հինգերորդ. - Կեդր. Վարչ. ժողովը Բարերար Անդամ տնտեսը պիտի տայ այն անձանց՝ որք միանուազ հազար Անդամական ոսկեղ նուէր մը կընեն Միութեան : Եւ Պատույն Անդամ տնտեսը պիտի տայ այն անձանց՝ որք նոյնպէս միանուազ չորս հարիւր Անդ. ոսկեղ նուէր մը կընեն Միութեան :

Ըստ այս յօդուածի տրամադրութեան Բարերար Անդամներ են, Վ. Վ. Պօղոս բաշա Նուպար և Արաճամ բաշա Բարթոլ. իսկ Պատույն Անդամներ են. Վսեմ. Եագուպ Արթին բաշա, Տիկին Մարի Պօղոս բաշա Նուպար, և Տիկ. Նոյեմի Գափամաճեան, որ քայքայ է Ն. Վ. Պօղոս բաշայի :

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԻ ՀԻՆԷՆ ՆՈՐԷՆ

Այ ժամանակն է որ փոքրեւոր ձեռնարկեմք Երուսաղէմ յ'ախտաւախի հակագոցեալ Դերապախ Տէր Անունի Եպիսկոպոս Երջմանեանի աստարածար Տ Օ Ս Ի Է Ն. Թո՛ղ Գաւիտի կողմնակազ Ազգ. Առաջնորդարանը իմ գոյժերս և քրքերս՝ ու ինչ որ իմ ապացոյցներս պիտի կազմեն ոճիրներ և գողութիւններ ողջալիս հանրութեան դասասանիկ եկարկերս՝ ապառնչ և ոչնչացրելու ջանայ : Թո՛ղ Իզմիրեան Մարտիկ իր բարձր ժողովրդականութիւնը և ազդեցութիւնը գործածե պաշտպանելու համար նազարեթներու նման իր մտքի գործակալները՝ Ե. Գիսյոսի մէջ : Թո՛ղ ֆանի մը ոչխարամիտ խնդրեմք Հայ Յեղարկո-

խորեան անունով անկեղծ հոգիները խոչնակելու և կոշկոնելու միջոց իսկ սպանելու յարի յառաջանան : Թո՛ղ ամեն քանակ յրարիներ և անխրատութիւններ պաշտպանութիւն գտնել ւ' յայտի անձեր՝ որոնց ուղղամտութիւնը երբէք չ'պիտի ցանկայի կարգ մը սիւնիք որ և ստոր ին վաստերու ի սպաս դրուած ինքնաւր Բայց քո՛ղ աչս ամենը ըզրս՝ որպէս զի կասարտի Հանգոցեալ իսկալիստեան Եպիսկոպոսի շանար խոստեր. ԱՆՈՂՈՒՔ Է ԺԱՄԱՆԱԿԸ. ԱՆՈՂՈՒՔ Է ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ՕՐ ՄԸ, ԱՄԷՆ ԲԱՆ ԼՈՒՍՈՅ ՄԷՁ ՊԵՏԻ ԳԵՆ . . .

Հիմայ՝ Հանգոցեալ Անունի Եպիսկոպոսի անկեղծ բարեկամներն են որ կը խօսին . քո՛ղ ամեն ճիշտարիտ իր ականջները սրէ ճիշտարարիներն միայն ըսելու հաւար :

Ն Ա Մ Ա Կ Պ Է Յ Ր Ո Ւ Թ Է Ն

Պատուարժան Ամբաստանութիւն ԱՐՇԱՂՈՍՍ ազգանուէր անկախ թերթի Գաւիտի

Մեծապատիւ Տիարք Երուսաղէմ Ժողովուրդայ վարժարանը գտնուած ատենս, թէև կուզէի ձեռն աղեկացնել այս լուրը, սակայն մեր մէջէն ո՛ր մէկը կը համարձակէր բան մը գրելու : Ըլլա՛յ Տեսչի վարժարան, (Եզրի վարժարան Չիլիկիցեան մեր Տեսուչն էր) ըլլա՛յ վարժարան վերաբերմամբ, որովհետեւ Տեսուչ Հայր սուրբը « սանիւր » ի նման մեր նամակները կը բանար, այժմ՝ շնորհիւ Օսմ. Սահմանադրութեան՝ այդ արգելքները վերացուած ըլլալով կը խնդրեմ որ ներփակեալ գրութիւնը ձեր անկախ և անաչառ թերթին մէջ հրատարակուի շնորհը ընէք :

Մամ յարգանքով Ա.ՉԱՍԱԿԱՆԸ

ԴԵՐ. Տ. ՂԵՒՈՆԻ ԵՊՍ. ՇԻՇՄԱՆ. ԵԱՆԻ ՄԱՏՆԻՉՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՐ ՄՍՀՈՒՍՆ ՊԱՏՁԱՌՆԵՐԸ

Պէյրուտ 30 Օգոս. 908

Ամբողջ թերթայ լրագրութիւնը շատ բանք գրեցին Իզմիրեանի՝ Խարխալեանի և ուրիշ արքայաւորներու համար, սակայն ցաւօք սըրտի տեսայ թէ երբէք չի յիշուցաւ խեղճ Անունի Եպիսկոպոս Երջմանեանի անունը՝ որ նման Իզմիրեանի Երուսաղէմ արքայաւոր էր հին Ռէպիլին օրով :

Երջմանեանի արքայաւոր աւե-

լի ցաւալի՛ աւելի՛ ողբալի էր, վարժարան Իզմիրեանի պէս 3-4 սենեակներէ բաղկացեալ տեղ մը չ'էր ընակէր, Իզմիրեանի նման ամասկան 20 սեղի չ'էր ստանար, այլ փոքրիկ սենեակ մը տուած էին խեղճ Սրբազանին, որ իր առած երկու ոսկի ամսականով կը գոհանար (ասիկայ փոխարէն էր ժողովուրդայ վարժարանին մէջ տուած հայերէն և ֆրանսերէն դասերուն) երբէք տրտուելի ո՛ր է ձայն մը, բողբոջ մը չէր լսուած անոր բերնէն, այլ լուրի միջիկ նստած իր գործերով կը կըզբաղէր, Պօղոս թերթերուն կ'աշխատակցէր « Վարչ » ծածկանունին տակ, Արշալոյսին մէջ ունի Հայրենասիրական ամենաբարձր օտանաւորներ՝ որոնք ի վերջոյ « ՅԱԵԼՈՒՍԵՆԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԱՅԷՄ » գիրքը կազմեցին (*), և որ Գոթապը Սրբազանին տարածած մահուան պատճառ եղաւ ահա թէ ինչպէս :

Իեր. Տէր Անունի Եպիսկոպոս Սրբազան Երջմանեան Վանքին մէջ գործուած զեղծումները լրագրութեան կուտար որուն չ'հանդուրժելով քանի մը սրիկայ վերաբերեալ ուղեցին Անոր բերանը յախտանա փակել, Անոր դէիջը յախտանա բեկանել, և յաջողեցան ալ անամբիւրդ :

Եզրի վրայ. Չիլիկիցեան և Երուսաղէմի Պատրիարքին պաշտպանեալը Չիլիկցի Անտիոքի Թաշեան անուն ցած արքայաւորները վասակի դերը ստանձնեցին, Երջմանեանի յօրինած (Յաւերգը Հայրենայ) ըլլա՛յ ամենաբարձր կառավարիչ Ռէպիլիտ բաշային տարին ըսելով որ՝ « Երջմանեան արքայական մը ըլլալով հանդերձ մտաւոր գրքեր կը հրատարակէ, և ահա՛ գիրք մը որ խիստ վնասակար է տերութեան : Բաշան կանչել կուտայ Երջմանեանը և անոր կը յայտնէ թէ հայ վերաբար մը և փոքրաւոր մը գիրք մասնաձեւէն և գիրքը ցոյց կուտայ : Բաշան ի՞նչ կըրար ընել Երջմանեանին՝ քանի որ արքայական մ'էր : Երջմանեան յուզուած վսեմ կը դառնայ և երկու օր չանցած անկողին կ'ընայ, ճիշդ 15 օր տեղի հիւանդութիւնը տարաբար Սրբազանը զո՛հ եղած էր մասնութեան . . . » (*)

Հանգիստ ոսկորներուն Մա՛հ մասնիչներուն : Ա.ՉԱՍԱԿԱՆ ՄԸ

(*) Մ. Ա. - Արշալոյսին աշխատակցած է նաև « MEROWIG » ստորագրութեամբ եւ խիստ կարեւոր և շահեկան յօդուածներ ունի :

(**) Մ. Ա. - Հանգոցեալ բաղմարդին Սրբազանին մահուան պարագաները միմիայն եղած մասնութեան մէջ չ'սահմանափակուիլ, մինք անկէ աւելիները շատ աւելիները գիտենք :

ներու հազարապետը, Շիւքրի պէյ, խիստ յուզիչ եւ սրտառուչ ատենախօսութիւն մը ըրաւ լալով եւ լացնելով ներկաները: Ասկից զատ զօրականներէն ոմանք յաջորդաբար խօսեցան, նըուագածութիւններ եղան: Իսկ թուէս երկու օր առաջ՝ Կիւրակէ, հայերը թէ՛ կրօնական, թէ՛ աշխարհական եւ թէ՛ զպրոցական զատ՝ մասնաւոր կարգադրութեամբ եւ գրօշնարով, կուրծքերնին ազատութեան մասնակներ անցնելով, սեռայր մեքրեպը վերը ամբողջ գշտները առաջնորդարան զրկուած յատուկ մտադիւրացով փոխադարձ այցելութեան գացին, ուր զատ ընդունելութիւնը նկարագրել անկարելի է:

ԵՐԳ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատութեան աստղը պայծառ Որ վերադարձն շողայ փայտաւ՝ Ամէն սիրտերն է հրմայէր, Կեցցէնեքով զոտայ այր:

Ազատութիւնն այս խաղաղիկ՝ Սիրոյ յուսոյ անմեռ ծաղիկ Մըլի փայլով անակրկիտ, Հալեցնէ հին ոխերն ալ:

ձերմարի կարմիր գրօշներ վէս վէս Կը ծածանին հովերուն նետ, Այդ զոյգ գոյներ նուիրական Յիշատակօք կը պարծենան:

Լուսազգեստ է ազատութիւն՝ Բոսորդոյն զոհին արիւն, Այն արիւնով օժուած անմեղ Ազատութիւնն է փառայեղ:

Ազատութիւն կուզենք սակայն Իմաստուն, լուրջ, հայեացքով լայն, Արդարութեան հզօր բազուկ Մեր իրաւանց ըլլայ նեցուկ:

Արեւելի ազգեր ենք թոյր, Թո՛ղ հալածի նախանձը կոյր, Ձեռք ձեռքի տանք, ա՛լ հաշտուինք Եղբայրութեան կնքները դաշինք:

Հայրենիքին մի եւ ազատ Օսմանցիներ ենք հարազատ, Ձեռք ձեռքի տանք եւ աշխատինք, Այս սուրբ ուխտին վկայ երկիրք:

Մ. ԱձԷՄԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ Բերա

ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՅՐՅԵՐ

ԱՂԷՔՍԱՆԻՒՄԻՍ ԳՈՐԾԵՐԷՆ

Մեր հանրածանօթ բարեկամը Տ. Լեւոն Մկրտիչեան, Հրատարակչական Ընկերութեանը կամ լուս ևս՝ է ըսել իր թերթին 107 րդ. թըւովը «Համերաշխութեան պէտքը» վերնագրին ներքեւ իր պատգամները որոտալէն յետոյ, քիչ մը վարը «տեղական ազգային գործերը եւ Պօլսոյ Մամուլը» տիտղոսին տակ հին հաշիւներ մաքրելու իր ճիգերովը, գերազանցօրէն անհամերաշխութիւն արտայայտող շողողուն ապացոյցներ կուտայ:

Հարկ չկար այդ գրութեան ներքեւ Պ. Մկրտիչեանի ստորագրութիւնը փնտռել, այդ տողերուն մէջէն իր երկգրիմ զգացումները ի վեր հանելու համար: Տիրա Մկրտիչեանի երկու աչքերուն պէս փայլուն իր հակասական հոգին կարելի է գտնել անոնց մէջ:

Մեր հեղինակաւոր թեմական երեսփոխանը ուրախ է որ՝ Պօլսոյ թերթերէն «Արեւելք» ներշնչուելով «Արեւի» նպասակաւոր հրատարակութիւններէն՝ Սեպտ. 4 ի թի-

ւին մէջ արձագանք կուտայ մեր հերքումին, կ'ըսէ Տ. Մկրտիչեան 1000 ոսկիին ուրիշատութեան ստայօգլուրին:

Ուրախ է նաև որ՝ «Մանուկ մէկ էֆքեար» իր վերջին մէկ թիւով ամբողջովին կ'արտատպէ մի ումրէ կարապետ Ստեփանեանի «Արեւելեան Մամուլ» ի մէջ հրատարակած ՎրիժԱՌՈՒ յօդուածը...:

Ուրախ է որ՝ «Ծաղիկ» զաւելտաթերթը, ըստ Տ. Ե. Օստեանի գրածներուն՝ «Թուրքմազներու շովոյ չին մէջ լսմազրուած»՝ առիթ չի փախցնել երգիծական ակնարկութիւններ ընելու հոս տեղի հանրածանօթ մարդերուն եւ գործերուն:

Ուրախ է որ Աբրահամ բաշա Երամեան, որ 12 տարիէ ի վեր Պատրիարքարան օտք չէր կոխեր, Օրմանեանէն գանելուն համար, առաջինը եղեր է միգրիւեան Հայրիկին այցելողներուն:

Ուրիշ շատ մը ուրախութիւններ ալ ունի վերջապէս: Բայց մէկ արտօնութիւն ունի. տրամութիւն՝ որ հոգին կը քաղէ... այն է՝ թէ ինչպէս թերթի կան՝ որոնք կը շարունակեն կրակածելի յուրքիւն պահել. և —օճախ— էն առաքուած լուր մը՝ տեղեկութիւն մըմեծաւ փուտիստութեամբ կը հրատարակեն. ու Տ. Լ. Մկրտիչեան իր բոլոր անուշ լեզուները կը թափէ, որպէս զի Պօլսոյ բոլոր թերթերն ալ միահամուռ «Արեւի հրատարակութիւններէն և տուած լուսաբանութիւններէն» օգտուելով՝ վար դարնեն Վ. Բարթոլ բաշան, ու Աղէքսանդրիոյ Առաջնորդարանին լայնատարած պարտէզին կենտրոնը, արմաւենեաց շուքին տակ՝ կազմուի Լ. Մկրտիչեան ԲՈՒՆ ՕՃԱԽԸ. ուր ինչ լսակ պըտուիներ պիտի եփին ու հասնին...:

Տ. Լեւոն Մկրտիչեան իր վերոգրեալ արարաւ լեթեան և տրամութեան սուղանցումներուն մէջ, իր սրտին խորը բոյն գրած «Համերաշխութեան ոգիին» մէկ գործնական ապացոյցը ստուռ համար՝ առիթը չի փախցնել «բաշայի պէս քան մը ունիմ ալ» ըսելու: Ըսած է՝ բայց սա՛ տարբերութեամբ միայն՝ որ յայտնապէս ստորագրած չէ:

Հիմայ մենք բացատրենք թէ՛ ինչ ըսել և ընել կուզէ Պ. Մկրտիչեան, որպէս զի Պօլսոյ թերթերէն միմիայն «Արեւելք» չի առաջնորդու ինչ, որովհետեւ անկէ աւելի հինը կայ. «Սըչալոյ» յետոյ Արեւ...:

Տ. Մկրտիչեան շնորհով տեսակէն մանքարձի է. իր ըսածները ճշմարտանման կ'երևան, բայց առտոնց մէջ ճշմարտութենէ տարբեր բան փնտռել պէտք է. և ի մէջ այլոց՝ «ճշմարտանման» ցոյց տալու յատկութիւն մը, որ ամէն մարդու արուած չէ՝ բացի Մկրտիչեանէն:

Օրինակ մը տանք. Տ. Մկրտիչեան՝ «Արշալոյս» ին բարեկամ եղած ատեն, — հիմայ ալ տակաւին որոշ հակառակութիւն մը յայտնած չէ... — սուտ մը՝ իբրև իրաւ կըլլեցնելու և ինքիւնքը Տամատեան Տնորհքեան քարթիին ճանկերէն ազատելու համար, մանքար մը գլորեց, Ու ստուութեան ճիշտը հանելու համար՝ Նիլ անուն արարեղէն թերթ մը ստեղծեց, որ բնաւ գոյութիւն ունեցած չէ եղեր...:

«Եղիցի» Նիլ և եղև Նիլ... Այս հանելուկային լուրը ցնցեց ամբողջ երկրպետը, միասին ցնցելով Մկրտիչեան զօնքոն — քարթիին ինչպէս հիմայ Արեւ կը ցնցէ եղեր Պօլսոյ թերթերը, «Ծաղիկը» «Մանուկ մէն» ու քիչ մ'ալ «Արեւելք»...:

Ամենքիս ալ Նիլը փնտռելու ելանք. նոյն իսկ մեկտեղ առնելով Պարոնայք Օհան Խնտածեան, Եղիչէ Թորոսեան, Կ. Երզնկացեան և Շուպան, այլովքն հանգերծ:

Նիլ չ'կար... Հեռագիր հեռագրի, և նամակ նամակի վրայ:

— Պ. Մկրտիչեան՝ Նիլը (Նեղոս գետ կը նշանակէ) ո՛ր է... Ինչ կը հաւնիք որ պատասխանէ,

— Ես «Պաղոս» կը բնակիմ. Ռէմէի երկաթուղով երեկոյն տուն գնացած ատենս, տեսայ որ Նիլը ծովին կը խառնուի կոր: Վկայ՝ Տ. Տիգրան Չամբէրթէնեանը: Ան ալ տեսաւ որ ծովը իրար անցած է... անշուշտ բան մը կար: Տէ՛ բա՛ք նայինք. ինչ անուն տանք սա Մկրտիչեան Նիլին: Հաւատացէ՛ք. քիչ մնաց որ բոլորս ալ ինքնիզիքնիս նեղոսը նետէինք...:

Բայց գեռ հոս չ'աւարտիր...

ԱՐՇԻԻ

Ազգային, Դրական, և Բաղաքական կրթամեայ հանդէս, որ կը հրատարակուի ամէն ամսոյ 1 ին և 16 ին: Տարեկան բաժնեգիրն է արտասահմանի համար 7 ֆրանք, վեցամսեայն՝ 4 ֆրանք բացարձակապէս կանխիկ:

«ԱՐՇԻԻ» ը մեծերկայի ամենէն անկախ անաչառ և անվախ հանդէսն է, որուն Խմբագիրը, միս մինակ, կըցաւ արտասահմանական յեղափոխարմներ և գրամաշարթներ քօղամբերկել ու ջախջախել:

«ԱՐՇԻԻ» ը շարունակ կը հրատարակէ գեղեցիկ բանաստեղծութիւններ, ու Եւրոպական գրականութենէն հոյակապ նորավէպեր: Իր թիւ թ. էն սկսեալ կը թարգմանէ «Եսթեր» անունով հայկական վէպ մը, որ 1901 ին լոյս տեսած է Անգլիոյ մէջ: Հեղինակը, Վարդենի կեղծանունով, մօրը կողմէն անգլուհի, հօրը կողմէն հայուհի մը, ակնհաստեղած է 1896 ի կոտորած ին զոր նըկարագրել կը ջանայ անոր ամբողջ արտակեղծութեամբը: Վէպին հերոսը անհատ մը՝ կամ ժողովուրդ մը չէ, այլ Սուլթանին արիւնապետութեան կարծիք Արհաւիրքը:

«ԱՐՇԻԻ» ի բաժանորդագրուելու ուղղութիւնը թող զիմեն Խմբագրութեան կամ ուղղակի իր հասցէին:

Editor of ARDZIV P.O.Box 2285 Boston - Mass.

Յ. Գ. Ապուրիկ ապուրանքներ ու շաղրութեան չեն առնուիր:

ՀԵՌԱԳԻՐ

— Սալօնիկ 12 Սեպտ. «Սիւանիկ-Տէտէ» աղածի երկաթուղոյ պաշտօնեաներուն գործադուլին հետեւանք՝ ասոնց ամաթոշակներուն յաւելուած եղած է, աշխատութիւններ վերսկսած են:

— Կ. Պօլսոյ 12 Սեպտ. — Պուլկարիոյ Դիւանագիտական Գործակատար Պարոն Կէշօֆ Սօֆիա վերադարձած է, արտաքին գործոց նախարարին կողմէ Դիւանագիտական մարմնոյն արուած հացկերոյթին հրաւիրած չ'լինելուն համար: — Չմիւրեմ 13 Սեպտ. — Իզմիր այ-

տընի երկաթուղոյ պաշտօնեաները գործադուլ ըրին:

Փոխադրութիւնները դադրեցան: Գործաթողներուն սպանալիքներուն պատճառաւ՝ զօրքերով պաշտպանուած է կայսրանը:


— Իզմիր 13 Սեպտ. — Այտընի երկաթուղոյ պաշտօնեաներուն գործադուլը վերջ գտաւ: Գործաթողներուն առաջարկները ընդունուած են:

— Աթէնք 13 Սեպտ. — Ընդդիմադիր կուսակցութեան պետ Պ. Ռալլի, Սալօնիկ, Մանասթըր, Սէրէզ եւ Կ. Պօլսոյ կը մեկնի Մակեդոնիոյ մէջ Սահմանադրութեան գործադրութեանը տընուած արդիւնքին նկատմամբ քննութիւն մը կատարելու համար:

— Կ. Պօլսոյ 14 Սեպտ. — Պուլկարիոյ Գործակատարին միջազգայն շատ գէշ մեկնուած է: Կապածներ կան թէ՛ Պուլկարիա թուրքիոյ հետ իր յարաբերութիւնները վերստին զօրացնելու համար ջանք չ'պիտի ընէ, և իր անկախութիւնը պիտի հռչակէ:

— Ս. Բէթէրպուրկ 14 Սեպտ. Հոս Գօլբրայի 337 դէպք եւ 86 մաս կը հաշուուրի արդէն:

ՎԱՐԴ ԵՒ ՉԱՐԴ



ՅԱԿԻՆ ԼՈՒՍԻՒԷ Գ. ԶՈԼՄԻՐՈՅ
ՄՈՒՍԻ ԵՄՐԱ ՄԻՋԷՅԻՆ
ԼՍՏԻՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅԸ
ՃԻՇՏ ԴԻՄՍՏԸ
ԱՐՈՒՍԱՍԱԿԱՆ ՍԱՆԿԵՐՈՒ
ՊՔԵԼՅՅԵ
Հարսանեկան գեղակազմ պարզներու, շքեղ ծաղկեղողներու, պսակներու եւ թելոյթի

(չափղա) հրաշագեղ ծաղկեղներ ունենալու համար մի գիմէք սուրբ:

Մեր գիները զիւրաբանաչելի են եւ ապրանքները անմրցելի:

Փորձի համար անգամ մը այցելողը, սպանովապէս մեր մնայուն յաճատորը պիտի ըլլայ:

Մեր ապրանքներու փորձատուութիւնը այսպէս ըսել կուտայ մեզի:

81-43 ՏԻԿ. Լ. Պ. 201ԱԲՈՅ

ՍԵՂԱՆՍԻՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Մուսի փողոց թիւ 6, Սիկկորի մասնաձիւղին ֆոլ, Ժիւսքերի յիւնաց:

Կը գնէ և կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժեթղթերը, մասնաւորաբար Քրէտի ծօնսիէի հին եւ նոր, Բումբէի երկաթուղեաց եւ Բանամայի ֆրանսական վաւերացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'ախօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի:

Արժեթղթերու արդի խիստ նպաստաւոր գններն կրնան օգտուել երկարատարակ մեր ազգայինները մեզի գիմնելով:

Մասնավճարներով — 25, 50, 100-կարելի է արժեթղթերու տիրանալ, և մասնաչելի պայմաններով աւանդի փոխարէն՝ փոխատուութիւններ կնքել:

Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց, և առեւտրական ամեն կարգի Պոստի զեղչելու պատրաստակամութիւն:

Սեղանաւորական եւ Պօրսայի գործառնութիւններ եւ ա'յս կարգի գործերու վերաբերեալ զաւանտներն եղած Իանճնարարութիւններ փութով կը կատարուին:

Բումբէի երկաթուղոյ վիճակահանութեանց պատգ Օթօմանէն երաշխաւորեալ եւ վաւերացեալ քրօլ Կանիէր գնել ուղղութեան համար՝ լուս պատահողութիւն մէ՛ մեզի գիմնել, որովհետեւ պատգ Օթօմանէն ուղղակի կտանանք յիշեալ քրօլեաները:

12-50

ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՒՒՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿՂ - ԷԼ - ՊԻՐԲԷ ԲՈՂՈՑ ԷՕՁՊԷԲԻՑԷ



ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծիսախոսներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամավաճառ ըլլալու . բաւական է անդամ մը անպատճառ այցելել մեր վաճառատներին .

Պարսկական ամենաբնական թէմպէրի ալ և ալ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գտնելը պարզապէս սխալ է .

Մեր վաճառատունը վերջապէս, ղիներու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել սրոյած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անփութելի ապացոյցներէն մին ալ զարգացած Եւրոպացիներէ օրրոտօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

Նիւթերու ստատութեան պատճառաւ յատկապէս թիւը յաւելուածով պիտի հրատարակուի .

Գործակալի մը պէտքը կայ աղբք-սանդրոյ համար . Դիմել Խմբագրութեան հասցէին .

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՒՑԱԿ . Բ .

Արարկիբի կարօտելոց հանգանակիչ Մասնախմբին կողմէ զրկուած նախորդ Ա. ցուցակին մէջ Մեծ . Տիարք Նշան և Արեթնագով Հաճէթեան եղբարք՝ թէև 195 ղրջ . ստորագրուած էին, բայց 295 ղրջ . հրատարակուած էր .

Տպագրական սխալ մը չէր այդ . Տիար Արեթնագով Հաճէթեան՝ Խմբագրութեան ներկայացուցչին յայտնած էր թէ՛ իրենք իրենց մօր հողակոյտին վրայ գերեզմանաքար մը զետեղելու առթիւ որոշեալ սակը վճարելու համար զրամ զրկած ըլլալով Առաջնորդարան, այդ գումարէն աւելցած 100 ղրջ . ուղուած էր իբր առաջիկայ քսնի մը տարին ներքո ջրագին վար զնել, « Առաջնորդարանի զոնէն ներս մտած զրամը դուրս չելլար » սկզբունքով . . .

Հաճէթեան եղբարք՝ Առաջնորդարանի մէջ եղած այդ վերաբերիչ կարգադրութեան զէմ իբրաւամբ ներդանալով, ապահովգրեալ նամակաւ մը կը ծանուցանեն առ որ անկ է, թէ՛ իրենց հաւանութեամբ Արարկիբի կարօտելոց կարելի էր յատկացնել աւելցաց գումարը քան թէ ջուրի, որուն եթէ ժամանակը զայ իրենք վճարելու կարող եւ պատրաստն .

Մենք Հաճէթեան եղբարց առարկութիւնը բանաւոր գտնելով, փոխանակ 195 ի 295 ղրջ . հրատարակած էինք, ամեն պատասխանատուութիւն ստանձնելով Հաճէթեան եղբարցներու այս օրինաւոր առաջարկին զէմ հաւանական եղած վիճաբանութեանց .
ԽՄԲ .

Ա. ցուցակի գումարն 2832 ղր. 20 փր. Տ. Միտք Սարգիսեան 50, Փիլիպոս Մելիքեան 50, Սարգիս Շարապլեան 50, Մովսէս Շամլեան 50, Թոքաթեան 48 ղրջ . 30 փր. Քարալեան եղբարք 48 ղրջ . 30 փր. Մովսէս Ֆէրաշեան 40, Մանուրեան եղբարք 40, Ոնն 40, Նախնուր 40, Կարապետ Վարդանեան 40. Աշոտ Բրուտեան 30, Տօքթ. Ն. Քէչեճեան 25, Գեորգ Մարտիրոսեան 20, Մուշեղ Սերպէյեան 20, Ոնն 20, Կարապետ Բարուսեան 20, Ոնն 20, Արշակ Սէտէֆեան 20, Ճանիկեան 20, Փիլիպոս Պալուրի 20, Սարգիս Շարապլեան 20 .
Գումար Ա. Բ. ցուցակներու 3545
ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹ ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ն Ա Մ Ա Կ Գ Ա Հ Ի Բ Է Է Ն

Պատ. Խմբ. « Արշալոյս » Լրագրի Հաճեցէք անկին մը շնորհել Ձեր ազգօգուտ թերթին մէջ, թիւերի մացութիւն մը լուսանրատող հետեւեալ տղերքուս .

Կարնեցի աղքատ ընտանիքի մը համար զուտ ընտանեկան շրջանի մը մէջ եղած հանգանակութեան ցանկը, որ Պ. Եղիշէ Փամպուլեան անպատշաճօրէն հրատարակեց Արշալոյսի 505 թիւին մէջ. կարծելով թէ մենք յիշեալ ընտանեաց անուանով աւելի զրամ հանգանակելով կէսն ուրիշ աղքատի մը յատկացուցած ենք . Եւ ուրիշ պարոն մը ալ Արշալոյսի 506 թիւով կը յայտարարէ իր անուան համարձած ըլլալը ցանկին մէջէն առանց ի նկատի առնելու թէ իր ստուած անգին 5 ղրջ . որու ձեռամբ որ մասնակցած է՝ արդէն անոր ձեռամբ նշանակուած է ցանկին մէջ . Այս թերթի թիւերը ալ կը ծանրանայ Պ. Փամպուլեանի վրայ, քանի որ այդ ցանկը հրատարակութեան համար տրուած չէր իրեն, այլ իր հայրենակցին յանձնելու համար հանգանակեալ գումարը, և երբ հրատարակելու բարձր դադափարը յաւցաւ, պէտք էր նաև տեղեկանալ այն երկու նուիրատուութիւնը, որ փախանակ նուիրատուին անունը գրուելու, որու ձեռամբ որ մասնակցած է, անոր անունը գրուած է իրենց մականունը մեզի անձանթ ըլլալուն պատճառաւ .
Կը յուսամ թէ Պ. Փամպուլեան, խնդիրը հրապարակաւ քննարկելու ենթարկելէ վերջ, այլևս համոզուեցաւ թէ սխալած է եղեր իր անտեղի կարծիքներուն մէջ .
Եւ միևս պարոնին անունն ալ այժմ թերթերուն մէջ երեւնալով վստահ եղաւ որ անին մարդ զիտցաւ իր 5 ղրջ . առած ըլլալու .
Գ . ՊԵՂՊԷՐԵԱՆ

ԻՄԱՆՈՒՑՈՒՄ

Գահիրէ 8 Մէպո . 1908

Պատուարժան Խմբագրութիւն, « Արշալոյս » ի Հաճեցէք Ձեր ազգօգուտ թերթին մէջ անկին մը շնորհել հետեւեալ ծանուցման .

« Սանդուխտ » Ընկերութեան Գործ . Մարմինը կուգայ հրապարակաւ յայտնել թէ իր նախկին Գանձապետ Օր - Բուբուլ Եաղբճեան Պօլիս մեկնելուն պատճառաւ հաշիւներն փակելով հրատարած և անոր անդ Գանձապետ ընտրուած է Օր . Վարդուհի Չաղլասեանը .

Վարչ . Գործ . Ժողովոյ . Կնիք

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պալաքի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլերներն են ևւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է .


400 և աւելի վիպակաւ ևւ մեքենաներով վարձատրուած, Երաշխատուած մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ա.Ռ.Ս.Ղ.Ն. ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է . ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկլեր յաճեցէքին



ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգութիւններ, Սինկլեր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ .

Վճարմանց զիւրութիւն

Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՕՐԹԷԼ ՏՐԱՊԷԶՈՆ

ԱՂԷ ԲԱՍՆԵՐԻՍԱ

Քանթօ, Սուգուլ Մանկաի 3 Թէֆֆիեթ-է-Քալչաճի փողոց 3 Մանկաի Մզկիթին դիմը 3 Թիւ 3

Պանդուկաղետ - Մ. Գեորգեան

Կը յանձնարարուի արգոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեղծերնը գտնուող և օգուտէտ դիրքով սոյն պանդուկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն .

Դիմեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք .

Գինը շտապաւոր են . 28-55

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և եթովպիոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին փութացնել իրենց բաժնեգրիները, նկատելով որ տարւոյն իններորդ ամիսը կը թեւակոխենք .

Այսպէսով մեր յարգելի բաժանորդները մեզի խնայած կըլլան մասնաւոր դիմումներու առթիւ ըլլալիք ծախքերէն և ժամավաճառութիւններէ .

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԻՔ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբոսն վրայ եղող նպատակաւորներուն մէջ, մեր վաճառատուին միակն է որ ապրանքներու թարմութեան և մաքրութեան շնորհիւ մնալուն զիբք մը բռնած է տարիներէ ի վեր .

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատեղեցին մէջ .

Մեր յաճախորդները զո՞ր թողելու նպատակաւ սպասելի ապրանքներու ընտրութեան և գնումին առին շատ խնամք ևւ նոյն իսկ բժանդրութիւն կընենք . Ուրիմ նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է ևւ մաքուր մեր քով .

Կշիռը, որուն համար ուրիշ շատ անգոր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն առած է . վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գոհ մնացած են .

Ձեր տունին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար գիմեցէք ի Պապ-Էլ-Խալիք մեր վաճառատեղին ևւ չպիտի զլջաք .

16-41
ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՐՃԵԱՆ